

WALDBAU



ԵՐԿՐՈՐԳ ԲԱԺԻՆ



ՅՈՎՍԷՓ ԶԻՉՄԱՆԵԱՆ (ԾԵՐԵՆՅ)

Ամսոյս 17-ին Թիֆլիսում կնքեց իւր մահկանացուն յոգնաւաստակ հայ մատենագիր և հայրենագէտ բժշկապետ ՅՈՎՍԷՓ ԶԻՉՄԱՆԵԱՆ Կ. Պօլսեցի, մօտ եօթանասուն տարեկան հասակում, հեղինակ հռչակ ստացած ոսկեղէնիկ, հոգեպարար մատենաների—Թորոս Լեօնի, Երկունք իններորդ դարու, Թէոդորոս Ռշտունի: Բազմերախտ հեղինակը սան էր Մխիթարեան ուխտի, իսկ բժշկական արհեստը սովորել էր Փարիզ՝ արդէն արբուն հասակում: Նախ քան Փարիզ ուղևորուիլը բղձալից երկտասարդը ճանապարհորդեց մայր հայրենիքում, որպէս գորովալից որդի՝ քննելու իւր բազմաչարչար մօր ցաւերը, նրանց ամոքելուն նկրտելու համար:

Կիւրակէ ամսոյս 21-ին Թիֆլիսի Մուղնու ս. Գէորգ եկեղեցում կատարուեցաւ թաղման հանդէսը և մարմինը ամփոփուեցաւ հանգուցեալի վաղամեռիկ շնաշխարհիկ գտտեր շիրմին կից Խօջիվանքի գերեզմանատանը: Գաղաղի վրայ դրած էին երկու պսակներ՝ մինը Թիֆլիսի հեղինակների և միւսը «Փորձի» խմբագրի կողմից:

Հանգիսին չըկար ամբոխ, բայց ներկայ էր Թիֆլիսի ամբողջ հատրնտիր հասարակութիւնը: Եկեղեցում մի ողբից բանախօսութիւն արաւ Գեր. Առաջնորդ Տ. Արխատակէս Եպիսկոպոս, ասելով որ Զիշմանեանի մարմինը մեռաւ, բայց նրա հոգին ծնաւ որ յաւիտեան պիտի ապրի և աճի հայ ժողովրդի ծաղկման համար, Առաքեալի ասածին համաձայն, թէ՛ «Սերմանի մարմին շնչաւ որ և յառնէ մարմին հոգևոր»: Եկեղեցու բակում կարդաց կլասիկական անտիկ մի գամբանական պ. Աւետիք Եզեկեան, որ սքանչելի կերպով նկարեց Զիշմանեանի հոգևոր պատկերը:

Յաւիտենական յիշատակ առաքինի հային և տաղանդաւոր մատենագրին:

Տ Ե Ա Ր Ք,

Դուք, որ եկել էք ընկերականութեան վերջին պարտքը կատարելու, այս սրբազան մնացորդը մայր հողի ճոցը յուզարկաւորելու, կրչիշէք և գիտէք այն հողին, որ բնակութիւն ունէր այս շինուածքի մէջ. գիտէք և կրչիշէք այս շինուածքը՝ կանգուն և շարժուն, և ձրալիսի շարժուածք: Փշեցէք ի բաց տասն տարուայ աճիւնը, արձարձեցէք, կենդանացուցէք Ձեր չիշողութեան մէջ 1878 թուականը և Թորոս-Վեռնի հեղինակը՝ Ծերենց, իւր մենիկ դատերն հետ մեր քաղաքում, մեր կապոյտ երկնքի տակ. չիշեցէք այն աշխոյժ, այն փառփուն, այն իւր զգացումներովն ու զրուցատրութեամբը կրակ ու կաշձակ ձերունին իւր ազաւնի, հեզ և նազելի աղջկան հետ մեր ընտանեկան շրջաններում, մեր ինչոյքներում, մեր գրական և գիտական հանդէսներում: Տօն էր մեզ համար, կատարեալ վայելք՝ տեսնելն այդ ձերունին իւր բազմադիմի և անհուն հմտութեամբ, իւր հաչրենեաց անցեալի և ներկայի ընդարձակ գիտութեամբ և իւր անկեղծ, խորարմատ և հզօր զգացումներով առ այն ամենայն, որ ազգինն էր և հաչրենիքին, որ ազգինն է և հաչրենիքին և որ ցանկանում էր լինել ազգինն ու հաչրենիքին... Զմայլանք էր տեսնելն մի աղջիկ՝ գլխովն սքանչելի գեղեցիկ և աչքերն իմաստութեան կաշձերով լի, մաքուր և նուրբ հաչախօս, իւր հմտութեան պաշարներով, որ սիրելի հրապոյրքով վարագուրել գիտէր համեստութեան քօղի տակ, իւր հօր փոքրիկ կտորը. ոչ որոտում էր, ոչ մրրիկ հանում, այլ իւր հօր կողքին՝ նորա որոտումներից ու մրրիկներից չեա՝ խաղաղութեան և հեզիկ հանդարտութեան եօթնգունի ծիածանն էր: Յիշում էք աղջկանն և հօրը, Դուք՝ որ ճանաչած էք նոցա և գիտէք. բարի է: Զատերն արդեօք հին ճանօթներից տեսան հօրն մի երկու ամիս սրանից առաջ. չեմ կարծում: Այդ արծիւը, որ իւր ձագը մեր ոլորտներում կորցնելուց չեա, սիրտն արիւնոտ՝ զարձել գնացել էր իւր բնագաւառը, մի նոր զրգումն կրկին մղել էր նորան դառնալ գալ մեր կողմերը. երբ եկաւ հասաւ, մենք տեսանք վաղեմնի բարձրաթուիչ հաւքը՝ ձախ թեւը կախ ձգած և ձախ ոտը քաշ տանելով: Բախտը հարուածել էր նորան նոր մէկ անգամ: Նա, որ կորուսել էր կեանքի կէսը իւր ձագի հետ, այժմ կորուսած էր և մարմնի կէսը. կարո՞ղ էր միթէ աւելի դիմանալ: Նա, որ հնոց էր՝ և բոց էր արձակում խօսելիս, այժմ բեկուած էր հողին և իւր հանձարը կաշձեր էր միայն տալիս ընդհատ ընդհատ. բաց կաշձեր, որ թռչում էին արագ և ազգում էին՝ ուր ընկնում:

Անցան, անցան. իբրև ստուեր անցան, իբրև երազ ցնդեցան: Զոյգ գիսաւորներ, երևեցան մեր երկնքում և աներևութացան անսահմանութեան ճոցում: Այն, որ այդ չիշատակներից և չիշողութիւններից չեա՝ տեսնում ենք մեր աչքի առաջ, այժմ մի կողմի է՝ տապալուած, տերեւաթափ, ճզակոտոր, գօս, իսկ վաղը լինելու է մի բուռ աճիւն, ապա և երրորդ օրը քամու փըլմամբ օդի մէջ աննշմար ցնդուող մի փոշի: Այդ է վախճանը մարդու:

Բայց ինչ եմ ասում . . . Ես այդ կողմը չէի ուզում դարձնել ձեր ուշադրութիւնը, Տեառք իմ. թոյ տուք մեռելոց թաղել գմբետալս. մեր գործը մարդու մեռնող մասին հետ չէ. իմ խօսքս պէտք է լինի նորա ազնուագոյն և ատուածաչին մասի վրայ, որ հաղորդակից է անմահութեան: Համառօտիւ քննենք սա մարդը այս կէտից և աւելի հասկանալի լինինք:

Յովսէփ Քիչմանեան ծնուած էր 1822-ի Սեպտեմբերի 16-ին. ինն տարեկան հասակում ուղարկուել է Վենետիկ՝ Մխիթարեանց փանքք, ուր մնացել է հինգ տարի և սուր, չրգգայով կրօնաւորութեան փափագ, թողել է փանքք և վերադարձել է Պոլիս: Աչտեղ նա հինգ տարի աշակերտուծ է դեղագործութեան: Այն սերմն, որ ընկած էր նորա սրտի և մտքի վրայ Մխիթարաց փանքքում, որի ջերմանոցում այն ժամանակները տածուում էր և ծաղիկն Ալիշան: այն ժամանակուայ և նրանից առաջ մեծամեծ վարդապետների հաչքենանուէր ողին՝ որ թեւապարփակ գուրգուրալով ընկած սերմի վրայ՝ բեղմնաւորում էր դայն, այն սերմն սկսել էր ծիլ տալ և այն ողին շարունակում էր սնունդ մատակարարել այդ ծիլն: Յովսէփ Քիչմանեան թողնում է դեղագործութեան արուեստը և հոգին մղում է նորան դէպի հայաստան: 1843-ին, Օգոստոս ամսի 23-ին մեկնում է Պոլսից. իւր ուղեգծի վրայ ահա մեծ հանդուցները—Տրապիզոն, Գիւմրի շխանէ, Բաբերդ, Էրզրում, Ղարս, Ալէքսանդրապոլ, Թիֆլիս: Ապրիլի 3-ին 1844 թուի նորից մտնում է Պոլիս:

Դոկտօր, հարցնում էի նրան սրանից 2 շաբաթ առաջ, ինչ էր ճանապարհորդութեանը նպատակը. սրտառիտանեց, «Առգէլի խմանալ թէ ինչ կը նշանակէ հայաստան բառը»: Միրտարի միւս հարցմունքն էլ անել, որ բնական էր. ինչ տղաւորութիւն արաւ երկիրը. — «Ըստ խեղճ»:

Հայաստան և իւր որդոց խեղճ վիճակը. երկու բան, որ նորա տքնութեանց, մտածութեանց և գործոց առարկան են եղել այնուհետեւ, և որքան որքան խօսել, գրել և գործել է՝ բառին իւր նշանակութիւնը վերադարձնելուն աշխատելու նպատակով և վիճակից խեղճութիւնը խելու համար: Մանում է պատմութեան ճոցը, այնտեղից Թորոս-Աւոնին վեր կոչելու համար. գնում է աւելի խորը և այնտեղից ձայն է տալիս ժողովրդի մարդուն՝ Յովնանին, անցնում է աւելի հեռուն և զօղանչեցնում է լեռանց անձանների մէջ Թէոդորոս Ռշտունու գրահապատ և զինավառ ուրուականի վրայ նորա գրահներն ու զէնքերը. շարժիր, ով քաջ, թող շարժին ապառաղէն ձիււորներդ. անաէր Ռշտունիք անհամար հրոսակների երկիւղի ներքոյ մահմետանում, քրտանում են: Սակայն դիւցազանց ուրուականները մնում էին լուռ. ժամը չէր հասած, ուր նոքա թօթափելու են մահու իշխանութիւնը, որ քարացուցել է նոցա իրանը, որ կապել է նոցա բարբառը: Աերագաւնում է նա դէպի ամբոխը, ժողովուրդը. նորից մտնում է նորա շերտերի մէջ, հետազօտում է, շօշափում է, քննում է, կարող չէ սրղեօք սա ինքնին իւր փրկութիւնը գործել: Բայց ամբոխը, որպէս ինքը արդէն տեսել էր և զիտէր, ցրուած էր, կտոր-կտոր եղած և թափառական նայն իսկ մաջը հողի վր-

րաց, իւր պատերի գերեզմանաց շուրջը շուարական և նաև վաչրավատին հե-
ռու-հեռու աշխարհներ: Պէտք էր չետ կոչել, պէտք էր հաւաքել, պէտք էր
միացնել, պէտք էր միաբանեցնել: Մեր է ժողովատեղին, ինչ է միացման
կեդրոնը և որի կենդանարար ոգին պիտի շնչէր միաբանութիւնը ամբողջի
վրայ: Նա դարձնում է երեսը դէպի մաշրագաւառը, աչքը շառում է Միա-
ճեղքի վրայ և կոչումն է անում Քրիզոստոմի, Ներսէսների և Սահակ-Մես-
րոպների ոգուն: Բաժանումը վերացնելով, հաշք, ճիշտ դիպած կրքինինք նը-
պատակին: «Եւ ճամբը բարիքներ չեն խափանուիր, ազգային շառաջագիմու-
թիւնն և պայծառութիւնը դիւրաւ շառաջ կերթայ ամեն կողմանէ՝ մէկ ըլ-
լալով և ամեննիս միաբան միևնոյն վախճանին դիմելով»: Ասում է և միա-
նում է մի բնափր խմբի հետ ազգի էական և մեծ գանգուածին: Բաց կան
մարդիկ որ սրահանջում են մեծամեծս և ամբողջը շրանալ դիտէ հրաշքնե-
րից: Տուէք մեզ մարդը որ չուզէ մեծամեծ գործեր, տուէք մեզ սուրբը որ
գործէ հրաշքներ և հաւատանք: Եւ ձերունին դառնում է դէպի Ներսէս,
բաց նա, աւանդ, արդէն հիւանդ է. մասով ժողովրդին ցոյց է տալիս Խրի-
մեան, այդ հայաստան աշխարհի վրայ ամպանման կեցած մեծ և խորհրդա-
ւոր հոգին. բաց . . . և իմ է ձեզանից, որ չբնականաց և չմեկնէ ճշդու-
թեամբ այդ բացը . . . Աւանդ, ձերունի. ժամը չէ հասած և Ազոնացի Տէրը
դեռ ևս չէ արձակում իւր բարբառը առ Եզեկիէլ: «Որդի մարդոց, մարգա-
րեաց ի վերայ ոսկերացի այդոցիկ և ասացես ցղոսա. ոսկերք ցամաքեալք՝
յուարուք զպատգամս Տեան. աչապէս ասէ Տէր ցոսկերոզ ցաչոսիկ. ահա-
ւասիկ ես ածից ի վերայ ձեր շունչ կենդանի. և տաց ի ձեզ ջիւս, և ածից
ի վերայ ձեր մարմինս, և ձգեցից ի վերայ ձեր մորթ. և տաց զոգի իմ ի ձեզ,
և լինիջիք կենդանի, և ձանիջիք թէ ես եմ Տէր»: «Մարգարեաց, որդի
մարդոց ի վերայ շնչոյն, և ասացես ցղունչն. աչապէս ասէ Տէր Տէր. եկ,
շունչ, ի չորից հողմոց, և փչեա ի մեռեալս ցաչոսիկ և կեցցեն»: Այ, ձե-
րունի, Ազոնացի Տէրն էլ մնաց յուս, երբ դու նորան կանչեցիր և աներևոյթ
բանակների զօրութեամբ իղձ ըզձայար շարժել տալ ոսկորները, միացնել,
կենդանացնել: Ժամը չէր հասած, և դու ինքդ խանձուեցար և ածիւնացար
բուռն ըզձերիդ բոցերի մէջ, բաց հողիդ որ վերասրացաւ ի բարձունս, թող
աչժմ ուղարկէ մեզ հրեշտակ իւր իմաստութիւնն և զգացումները, և ասէ
մեզ՝ թէ ցորենի հասար մինչև որ չրնկնի հողի մէջ ու չմեռնի՝ ինքը միայն
կրմնաց, բաց եթէ մեռնի՝ շատ արդիւնք կուտայ: Այն, որ դու զգացիր,
բարոյեցիր և գործեցիր ցոյց կուտայ իւր արդիւնքը և աչժմէն իսկ երկուն-
քի մէջ է: Դու աչժմ մաղթ է Սաբառովթ Տիրոջէն, որ մեզ շնորհք և հանձար
պարպէէ հողի մէջ բնիւած ցորենը խնամելու և տածելու և Ինքն էլ երկրնե-
քէն ցող շնորհէ, և անաչ արև՝ որ ցորենն ածի և հասկանայ: Եւ թող հան-
գուցանողն Քրիստոս բնդունի քեզ իւր երկնային խաղաղ օթեզանում զրս-
տերդ մօտ, որ և այնտեղ չուզեց երկար մնալ ասանց քեզ: Յրհնեալ լինի
ձեր փշատակը մեր Կովկասի երկնքի տակ: